

Հանք ունի թէպէտ և առատ չըլլան : Պիրենեան ու Ղլպեան լեռանց ապառաժներէն կ'ելլեն ալնիւ մարմարիոն քարեր՝ ինչպէս գարգարա, արաբասդր, ծարիր, բիւրեղաքար, կռանիդ, և այլն. 80,000 հոգի միակերպ այս քարահատներու մէջ կ'աշխատին : — Մետաղաց մէջ նշանաւորներն են, երկաթ՝ որ 1847ին 37 միլիոն մէտրական կէնդինար հանուեցաւ . և առ հասարակ Վաղղիոյ ամէն կողմը կը գտնուի . պղինձ՝ որ նոյն պէս առատ է, կապար, զինգ, ոսկի՝ բայց քիչ քանակութեամբ, աղ՝ որ տարին 600 միլիոն հազարակրամ կ'ելլէ : — Ղշանաւոր են դարձեալ Վաղղիոյ հանքային ջրերը՝ և են թուով իբր 860⁶ չափ, որոնց մէջ թէ եռացեալը կայ՝ թէ գաղջը և թէ ցուրտը : Այս հանքային ջրերու քովերէն կ'ելլեն ծծումբ ու տեսակ տեսակ քիմիական աղեր :

Վէճայ . — Ինչպէս Վաղղիա բարեխառն կլիմայի տակ կ'իյնայ, ի վերայ այսր ամենայնի զանազան բարեխառնութիւններ ունի ըստ զրից այլ և այլ նահանգաց, ինչպէս բարձր ու ցած ըլլալէն որ զգալի փոփոխութիւն կը պատճառէ բարեխառնութեան վրայ : Արդ չորս տեղական գօտի կը բաժնուի Վաղղիա . առաջինն է երկիր ցորենոյ ըսուածը՝ որ հիւսիսային սահմաններէն առած կը հասնի մինչև Վանդի և Սէզիէնի ուղղութե գիծը . երկրորդն՝ երկիր այգեստանաց, թթենեաց և բանջարեղինաց՝ որ կը սկսի Վանդի ու Սէզիէնի ուղղութենէն և կ'երթայ մինչև Սգրազպուրկի ուղղութեամբ դէպ ի արևմուտք . երրորդը՝ նոյնպէս երկիր այգեստանաց, թթենեաց, մարացորենի և բանջարեղինաց, այս ալ նախընթաց գաւառներուն ստորին սահմաններէն առած կ'երթայ մինչև Վալնուպի ու Փերփինեանի ուղղութիւնը . չորրորդն է՝ երկիր ձիթատանաց, թթենեաց, այգեստանաց . որ մնացած ամբողջ հարաւային մասը կը պարունակեն : — Վաղղիոյ օդը ի հասարակի քաջառողջ է :

Կը շարունակուի :

Լօրտ Մաքաօլէ :

Լնցեալ տարուան ղեկտեմբեր ամսուն Լնգլիա անձ մը կորսնցուց, որուն կեանքը իր հայրենեացը փառքն էր և իր տարածամ մահը իր ամէն ազգայիններուն ընդհանուր սգոյ նիւթ եղաւ :

Լօրտ Մաքաօլէ վաթսուն տարեկան հասակին գերեզման իջաւ յետ մեծապէս փառաւորութեւ իբրեւ քաղաքագէտ ու իբրեւ մատենագիր . մարդկային կեանք մը ասկէ աւելի փառաց դժուարաւ կրնայ հասնիլ : Լնգլիա առեւի գերեզմանին գիմաց, զոր մահուան լուծիւնը ալ աւելի վսեմութեան քողով մը հիմա կը ծածկէ, արժան է աս մեծ անգլիացոյն յիշատակին քանի մը խօսք ըսել և զինքը ծանուցանել մեր ընթերցողաց :

Լօրտ Մաքաօլէ ան տեսակ մատենագիրներէն էր, որ մագիչ հանճարովը իր ունկնդրաց վրայ կը տիրապետէր, իրեն աս լուծէն խալըսիլն անկարելի էր : Լնգլիա հմտութիւն ունէր ու միանգամայն խօսակցութեան այնպիսի սուրբ մը, որ խօսքով դժուարին է որոշ գաղափար մը տալ : Տեղեկութեց այդ հիանալի առատաբեղ զոսանքը լիաձեռն կը սփռէր իր ճառերուն, իր գրուածքներուն ու իր խօսակցութեանց մէջ, այնպէս որ կամայ ու ակամայ իր ունկնդիրը թուեալ կը մնար ու չէր գիտէր թէ աւելի որո՞նք վրայ զարմանայ, արդեօք անոր անբաւ ծանօթութեանցը ընդարձակութեանը վրայ, թէ չէ զանոնք հիանալի կերպով բացատրելուն ու դուրս ցատքեցրնելուն : Լնգլիոյ պատմութեան աղբիւրներուն խորին հմտութիւն ունէր Լնկերտին¹ չափ, գրութեան ոճովը անկէ ալ վեր էր, միայն անոր պէս անկողմնասէր ու

¹ Լնկերտ անգլիացի պատմագիր աս դարուս մէջ . շատ մանր մուշր գրուածքներէն զատ իրեն երևելի գործքն է Պատմութիւն Անգլիոյ, համայնացոյ տուալին արշաւանքէն ինչուան 1688 տարուոյն Անգլիոյ յիշափոխութիւնը :

ստուգապատում չէ, թէպէտ և վերջերս երթալով իրեն ըրած առջի դատաստաններէն շատը սրբապրած էր: Իր կենացը վերջի տարիները պատմական դրութեան մը նուիրած էր, որ թերևս մատենագիրն փառացի արձանը պիտի ըլլար և Վուկիդիտեսին բացատրութեանը համեմատ՝ գործ մը որ միշտ պիտի ապրէր, եթէ նախախնամութիւն իրեն հեղինակին աւելի երկարագոյն կեանք մը չնորհէր ըլլար: Վեկտեմբերի 26^{էն} 1859 տարւոյն լորտ Սաքաօլէ իր ընտանիքը չորս կողմը բոլորած տնական ուրախութիւն մը կ'ընէր¹, և երկու օր ետքը յաւիտենականութեան քունը կը քնանար առանց հոգեւ վարքի ու առանց ցաւի: Բողէն քանի մը տարիէ 'ի վեր սրտի հիւանդութենէ մը կը տանջուէր, օր իր մահունէն իրեք շաբաթ առաջ նորէն աւելի ծանր նշաններով երեցեր էր, բայց աս նշանները անցած կ'երևնային. միայն ետքի խնջոյից օրը ազնուական լորտը իր ուրախ կենցաղավարութեանը հակառակ՝ սեղանի վրայ գրեթէ չէր խօսէր: Երբ ամսուն 28^{էն} իրիկուան Սաքաօլէ մեռած էր:

Թովմաս Պապինկդըն Սաքաօլէ ծնաւ 1800^{էն} հոկտ. 25^{էն} Բողլի-Վէմբլէ Էյսըսդըր կոմսութեան մէջ: Իրեն հայրը Օաքարիա Սաքաօլէն էր, որուն գերեզմանը Ուէսդմինսդրի Բաբայարանը կը տեսնուի այսօրուան օրս. ասիկայ Բնգղիոյ Սարդասիրական ընկերութեան մը շատ գործունեայ անդամներէն մէկն եղած էր. աս ընկերութեանս վախճանն էր գերեաց վաճառականութիւնը ջնջել աշխարհքիս վրայէն: Սաքաօլէին ցեղը ծագմամբ Ուոլտիոյ լեռներէն էր, ուր իր հօրը Օաքարիային հայրը ու հօրեղբայրը Երեյաիւն ըսուած աղանդոյն պաշտօնեայներն էին: Վիտելու արժանի է իրեն աս ազգաբանութիւնը, որովհետեւ ասոր ազգեցութիւնը շատ յայտնի

կ'երևայ մեր մատենագիրն գրուածոցը վրայ. մանաւանդ իր ճաշակաւ մէջ անմանաւոր յարումը կը տեսնուի, ոչ միայն աստուածաշնչական ձևեր ու բացատրութիւններ գործածելու՝ որ ամէն Բնգղիացւոյ սիրելի է, հապա նաև ան օտար ու անսովոր զրուցածքի դարձուածքներ, որ այսօրուան օրս դեռ Ուոլտացի կալվինականները կը յարգեն:

Պապինկդըն Սաքաօլէին հայրն ալ Գաբրիէլ ըսուած խիստ աղանդաւորներէն էր, որ երիտասարդ հասակին մէջ Բրեմստեան Հնգկաստանի վաճառականութեանը մէջ մտնելով, Լամայիքա խրկուեցաւ, ուր սարսափով տեսաւ խափշիկ գերիներուն խղճալի վիճակը. աս անգթութիւններէն զրուած Օաքարիան Սիէրա-Էոնէին վատառողջ ափունքը գնաց բնակելու, յուսալով որ Վամայ որդւոցը մէջ բարոյական աղէկութիւն մը ընէ: Բնաւասիկ իր տանը այսպիսի գեղեցիկ օրինակներովը մեծցաւ Լորտ Սաքաօլէ: Իր առջի ուսմունքները հօրը քովը ընէին ետեւ, Վէյմպրիճի կոմսութեանը մէջ Էլֆըրտ դպրոց մը մտաւ ու 1818^{էն} ալ Վէյմպրիճի հաշակաւոր համալսարանը անցաւ:

Սէկէն համալսարանին աս նոր ուսանողը երկու քերթուած շինեց, մէկը Պոմպէյի աւերակներուն վրայ, մէկան ալ Երեկոյ ըսուած. երկուքն ալ պսակուեցան համալսարանէն, ու երկուքն ալ իր մատենագրութեանց հաւաքմանը մէջ տպած են: Բնկէ վերջը խորհրդարանին ապագայ առենաբանը հակաճառութեան ընկերութեանց մէկուն անդամ գրուեցաւ, ուր որ Բնգղիոյ պատանիները կանուխկէկ կը վարժին հրապարակաւ բանեցընելու իրենց ճարտասանութիւնը, որով ետքէն կը կառավարեն իրենց հայրենիքը: Սաքաօլէ շատ ատեն կ'անցընէր աս տեղս, ու իր պերճախօսութեան հանճարը նախ հոս փայլեցաւ: Իր հայրը կ'ուզէր զինքը փաստաբան ընել, բայց հաւանականաբար որդին իր տաղանդը զգա-

¹ Բնգղիա ծննդեան տօնին աս ընտանեկան կենաց համախմբութիւնները սովորական են:

լով՝ ալ աւելի բարձր վիճակի հետա-
մուտ էր : Համալսարանէն ՚ի վարձ իր
քաջութիւնով թէր ապահով եկամուտ
մը ունէր , իր հայրը բաւական հարուստ
էր ու բաւական ազդեցութիւն ունէր
քաղաքական աշխարհքին մէջ վերոյի-
շեալ մարդասիրական ընկերութեան
անդամն ըլլալով , որովհետեւ գերեաց
ազատութիւնը ան ատենին քաղաքա-
կան մեծ խնդիրն էր : Ըստ մէկ յաջող
պարագայները Սաքաօլէ պատանոյն
փառաւոր ապագայ մը կը խոստանային :
Դադմամբ Սկոլտացի ու կրօնիւք աւե-
րարանէն ըլլալով , աս երկու պարա-
գան ալ իրեն բաղդին նպաստաւոր էր :
Ընդհանրապէս Սկոլտացին վաստակե-
լու յամառ յարատեւութիւն մը ունի ,
ինչպէս ամէն լեւնական ժողովուրդներ՝
հանգերձ արդարախոհ ուղղութեամբ .
իսկ աւերարանէն Ընդլոյ մէջ փո-
խադարձաբար իր ընկերոջը ազդու օգ-
նութիւն ու գործակցութիւն կ'ընէ
կամ իշխանութեան հասցրնելու և կամ
հարստացրնելու համար , անանկ որ թէ
որ Սաքաօլէն սովորական մարդ մըն
ալ ըլլար , իր հօրը բարեկամներէն շատ
բան կրնար յուսալ , ևս առաւել երբոր
տեսան որ տաղանդաւոր պատանի մըն
է և արդէն շատ անգամ պսակուած իր
գրուածոցը համար դեռ այսպիսի մա-
տաղ հասակի մէջ՝ Խնչ չէին ընէր : Ըն-
ջի անգամ Սորհրդարան մտնելը 1825
ու 1830^{ին} մէջտեղը կ'իյնայ , աս ատեն
սկսաւ նաեւ առջի անգամ օրագրաց մէջ
գրելու : Ընալ Երանայ Կանդէս աւ-
րեաց¹ ըսուած օրագրին շարադրողնե-
րէն եղաւ . իր յօդուածները ու բանա-
ստեղծութիւնները աս օրագրին յարգն
աւելցուցին . ասոր մէջ հետզհետէ հրա-
տարակեց իր սյուրբները սպանիական
Ըրմատային² , Սրբազան Դաշնակցու-
թեան³ , ու Եւրոպի⁴ պատերազմին վը-

րայ : Հոս տեղ Սաքաօլէին գովեստին
համար ըսելու է որ իր երիտասարդու-
թեան աս երկասիրութիւնները չուզեց
նորէն տպել , այնպէս որ իրեն տպագրիչ
ները ստիպուեցան բրիտանական թան-
գարանին խորերէն բնտուելու զանոնք
ի լոյս ընծայելու համար : Դեռ հա-
մալսարանէն դուրս չելած , արդէն ա-
նունը հռչակուած էր զանազան ու-
սումնական ու բանասիրական օրագրաց
մէջ հրատարակած յօդուածներովը :
Ըն ատենը Էպիֆանիէ Կանդէս ըսուած
համբաւաւոր օրագիրը առաջարկեց ի-
րեն Սիլտոնի վրայ յօդուած մը գրել ,
որ ետքէն Ընդլոյ արդի մատենագրու-
թեան պատմութեանը մէջ միշտ նշա-
նաւոր տեղ մը բռնեց : Ըստ գրուածքս
1825^{ին} հրատարակուեցաւ ու ան աս-
տիճան Ղեֆրի հռչակաւոր բանասի-
րին կիրթ ճաշակը զարմացուց , որ մէ-
կէն այսպիսի տաղանդ մը ուզեց գոր-
ծակից առնել Էպիֆանիէ Կանդէսին խումբ
բազրութեանը , որուն գլուխ ինքն էր :
Սակայն անաչառ քննադատներ այսօ-
րուան օրս նոյն ընդունելութիւնն ու
նոյն յարգը չեն տար աս գրուածքին՝
ինչ որ հրատարակուած ժամանակը , և
ընդհանրապէս կը համաձայնին նոյն իսկ
հեղինակին անաչառ դատաստանին , որ
տեղ մը ասանկ կ'ըսէ . “ Ըն ատենը
պսակաւորեալ պատանի ուսանող մըն
էի դեռ նոր սրուած . հիմա հազիւ թէ
կը հաւանէի ան գրուածքէս մէկ պար-
բերութիւն մը պահելու , որն որ սխալ
ու գէշ ճաշակի զարդերով խուկած է , ”

Տասնըութը ամիս վերջը ուրիշ յօ-
դուած մըն ալ հրատարակեց Սաքաօլէ
վելիին վրայ . ասոր մէջ զգալի կ'երևայ
հեղինակին յառաջադիմութիւնը թէ
մտածութեանց և թէ գրութեան ոճին
կողմանէ . նախ աս գրուածքին մէջ կ'ե-
րևան ան կատարելութիւնները , որ ետ-
քէն աս գերազանց մատենագիրը զար-
մանալի պիտի ընէր Ընդլոյ ու նաեւ
բոլոր Եւրոպիոյ . ձկունութիւն մը մտա-

¹ Անգլ . Knight 's quarterly Review.

² Սպանիոյ թագաւոր Փիլիպպոս Բին 135 մեծ
նաւերով 1588ին ընդգէմ Անգլիոյ խաւրած տոր-
մոյն անունն էր :

³ Գաղղիոյ ուղղափառ իշխանաց միաբանութիւն
էր ընդգէմ կալվնականաց Գաղղիոյ 1576ին :

⁴ Աւան Գաղղիոյ Էօր դաւառին մէջ . աս տեղս

Հենրիկոս Դ յաղթեց Մայէն դքսին , որ Սրբա-
զան Դաշնակցութեան գլուխն էր . Մարտի 14 .
1590ին :

ծուծեանց, կրօնական թոյլութեամբ ոգի մը, կանոնաւոր ու ճշգրտ լեզու մը, բայց միանգամայն սաստիկ գունաւոր: Եւ այն գովեստից արժանի են նաև Հալամ դարուս անգղիացի մեծ քննադատին ու Սաուտհի բանաստեղծին վրայ գրած յօդուածները, որ 1830էն առաջ հրատարակուեցան:

Վիչ մը կանկ առնենք աս տեղս ու մեր պատանի հեղինակին ընտանեկան կենաց մանր հանգամանքները զննենք, որուն վրայ արդէն իր ժամանակակիցը աչուրնին դարձուցած էին: Սաքաօլէ աշխոյժ երգիծաբանութեան անսպաւելի աղբիւր մը ունէր, զորն որ երբեմն երբեմն ամենօրեայ լրագրաց մէջ ալ երևան կը հանէր: Ետքէն ասոնցմէ մէկ քանին ուղեց որ մոռացութեան մէջ թաղուին, որոնք ժամանակին քաղաքական խնդիրներուն հետ ծնած ու մեռած էին: Վաղաքական երգիծաբանութիւնը, ինչպէս նաև քաղաքական գաղափարաւորութեան, ինչպէս ծնած է: Եւ պատմեն որ օր մը Ռոճըրս բանաստեղծին սեղանը Վեմպլը բանաստեղծը սկսաւ հացկատակներու վրայ կծու երգիծաբանութիւն մը արտասանել, որ ան ատենը Լոնտոնայի մէջ ամենուն բերանը կը պտրտէր. «Եւ տողերը դուն աղէկ պիտի ճանչնաս», ըսաւ Վեմպլը նշանական կերպով մը նայելով ընկերոջ մաս Սուր բանաստեղծին, որ նոյնպէս բազմականներէն էր: «Եւ, ըսաւ Լոնտոնացի բանաստեղծը, ես չեմ ատոր յանցաւորը. — Բայց բոլոր աշխարհք կ'ըսէ, որ դուն ես ատոր հեղինակը. — Եւ չեմ ատոր աշխարհք կը խաբուի: Եւ միջոցիս, կը շարունակէ Սուր (որովհետեւ ինքն է պատմողը) Սաքաօլէն յանկարծ խօսքերնիս կտրելով կ'ըսէ. «Եւ ստացուածքս է ասիկայ», ալ երևակայէ՛ մեր զարմանքը. ան ատեն ամենքնիս միաբերան աղաչեցինք իրեն, որ ամբողջ արտասանէ մեզի այդ իր երգիծաբանութիւնը. սիրով կատարեց մեր խնդիրը: Եւ նոյն միջոցին մէկ ուրիշ քաղաքական երգիծաբանութիւն մըն ալ յիշեցի Ուիլյամ Վիչըս

անունով մէկուն նուիրակ ընտրուելուն վրայ. աս երգիծաբանութիւնը շատ հանճարաւոր ու կատակաբան գտած էր: Եւ երգիծաբանութեան մէջ, ըսի, այնպիսի հանճարաւոր գիւտ տեսայ ու այնպիսի զօրաւոր լեզու, որ մէկէն Վայմզի լրագրապետ Պէօրնսին գրեցի, որ ասանկ կտրիճ գրիչ մը իրեն լրագրին շարադրողներէն մէկն ընէ. «Եւ, ատ ալ իմ ապրանքս է», կրկնեց Սաքաօլէն. ասով իրեն մէկ նոր տաղանդն ալ կը ծանուցանէր մեզի, զորն որ ամենեւին չէինք կրնար մակաբերել»:

Եւ այսպիսի գերազանց կատարելութիւններ և ունեցած իրական քաղաքական ազդեցութիւնը Սաքաօլէին Խորհրդարանին դռները բացին ու քիչ ատենէն (1830) նաև կառավարութեան մէջ ալ մտաւ իբրեւ նախագահ մնանկութեան ատենին. պէտք չէ մոռնալ որ Սաքաօլէն իրաւագիտութեան ետեւէ եղած էր երկայն ատեն:

Եւ օրուրէն ետքը Սաքաօլէ երկայն տարիներ աւելի քաղաքագէտ եղաւ քան թէ մատենագիր: Իր առջի ճառերովը մէկէն մեծ տպաւորութիւն ըրաւ Խորհրդարանին վրայ: Եւ պատմեն որ օր մը Շիլ նուիրակը () քննելի բարեկամներէն մէկը և գրեթէ իրեն հաւասար պերճախօս, տեսնալով որ նուիրակներէն մէկը զՍաքաօլէն կը նախատէր, սուր ձայնով մը պոռաց. «Եւ կ'ընես, Պարոն. ինչ կը բարբանջես. շատ միջանդգնիր Սաքաօլէն վար զարնելու. բոլոր քրիստոնէութեան ամենէն ճարպիկ մարդն է. միթէ ինքը չ'ըրոս աղուոր ճառ շինողը նուիրակաց ընտրութեան օրէնքը փոփոխելու համար ու 10,000 սղեռլին վաստակողը. մէյմը մտածէ աս ու լուռ կեցիր», Եւ նորանշան ջատագովութիւնը մէկ կողմանէ թէպէտ և Խորհրդարանին ծիծաղը շարժեց, բայց միւս կողմանէ իրեն վախճանին ալ հասաւ: Եւ ատ բան կը սպասէին մեր նոր նուիրակէն. ու մանք ինչուան հռչակաւոր Պրըքին հետ կը բաղդատէին, ուսկից շատ վար է: Իրաւ շատ փայլեցաւ վերոյիշեալ ըն-

տրութեան օրինաց հակաճառութեանը մէջ, բայց ստիպուեցաւ յաղթութեան պսակը Եօրտ Տէրպիին թողու, որուն պերճախօսութիւնը աւելի ինքնաբերական է, որով և աւելի ճշմարիտ քաղաքական պերճախօսութիւն է։ Իրաւն ըսելով Սաքաօլէին ճառերը աւելի ուժով ու անվախ պատճառաբանութեան գեղեցիկ օրինակներ էին, քան թէ կրիւք վառեալ հոգւոյ մը թափ, որ կ'ուզէ ուրիշ սիրտերն ալ իր ելեքտրացուցիչ խօսքին ազդեցութեամբ բորբոքել։ Թաւրէս իր աս երկրորդական կարգի պերճախօսութեամբ ան հեղինակութիւնն ունեցաւ Խորհրդարանին վրայ, զոր շատ անգամ մեծ պերճախօսութիւնը կասկածելի ըլլալով չունենար։ Սակայն Սաքաօլէ ան ատեն իր կողմին մեծ օգուտ ըրաւ, անանկ որ վերոյիշեալ հռչակաւոր ճշգրիտ ասանկ կը գրէ ան ատեն Եօրտ Քոբակօնին. «Օարմանալի մարդ մըն է Սաքաօլէ։ Ի՞նչ վերջերս հնդկաստանի խնդրոյն վրայ ինչուան հիմա խօսուածներուն մէջ ամենէն ազուոր ճառը խօսեցաւ։ . . . Խորհրդարանին գահերէցը, որ այս նիւթիս մէջ աղէկ դատաւոր է, հրապարակաւ ծանոյց, որ ասոր նման ճառ ամենեւին չէր լսած, Եօրտիայ բարեկամի մը ու կուսակցի դատաստանն է. հիմա մտիկ ընենք ուրիշ անկողմնասէր, բայց միանգամայն բարեւեր դատաւոր մը, որ շատ անգամ Սաքաօլէին մտիկ ըրած է Խորհրդարանին մէջ. «Իրաւամբ կրնանք երկբայիւ, որ ճշմարիտ հասարակ ըլլայ Սաքաօլէն։ Հանգերձ իր անհուն հմտութեամբը ու իր արտասանութեան հրաշալի յաջողակութեամբը ոչ երբեք առանց երկար պատրաստութեան կրցաւ խօսիլ։ Իբրեւ պերճախօս իր ունկնդրաց վրայ չէր տիրէր. իր ձայնական գործարանը քաջահնչող չէր. իր գլուխը շիտակ տնկուած կը կենար ուսերուն վրայ, ստուրներն ալ կարծես թէ անշարժ դետին գամուած էին, ասոնց ամենուն վրայ աւելցուր նաեւ ձեռքը կրունակին կպած ու հաղիւ թէ երբեմն

երբեմն աջ ձեռքը թեթեւ մը կը շարժէ, ան ատեն Սաքաօլէին ատենախօսութեան ժամանակ ունեցած մարմնոյն խիստ ձեւ ճիշդ աչքիդ առջևը կ'ունենաս։ Ինքը Սաքաօլէն Եօրտ Քոբակօն Սաքինդօլին ճառերը խօսուած ճաշիկէր կ'անուանէր. աս խօսքը ևս առաւել իրեններուն կը յարմարէր, որ մէկալին ճառերուն պէս գէթ եռանդուն ու գունաւոր լեզու մը չունէին։ Եօրտ ամենայնիւ ընդհանրապէս խօսելով իր արձակ լեզուն թերեւ ինչուան հիմա եղածներուն մէջ ընտրելագոյններէն է, ու Սաքաօլէն շատ աղէկ գիտէր ատիկայ բանեցընելու կերպը։ Թաւրէս և իր յանկարծախօս ճառերուն մէջ կարգէ դուրս փայլ մը չունէր, բայց գրեթէ միշտ խորհրդարանին երկու կողմն ալ կը յաջողէր զօշոտելու իր պատճառաբանութեամբը, և վերջապէս աս կատարելութիւնովը ամէն կուսակցութեանց մէջէն բազմաթիւ բարեկամներ ունեցաւ։

Եւաջին Խորհրդարանը, որ ընտրութեան օրինաց փոփոխութենէն վերջը ժողովուեցաւ, Սաքաօլէն իրեն անգամ ունեցաւ Եօրտ նշանաւոր քաղքին իբրեւ ներկայացուցիչը։ Բայց 1834ին ձգեց իր նուիրակութեան աթոռը հնդկաստանի գերագոյն ժողովոյն անգամ ըլլալու համար։ Երբեք թէ Սաքաօլէն անոր համար աս որոշմունքս ըրաւ, որովհետեւ ապահով էր թէ քիչ ատենի մէջ պատուաւոր կերպով կրնար հարստանալ. թէ որ աս խօսքս իրաւ է, աղէկ կ'երեւնայ աս տեղ Եօրտիայցւոյ բնաւորութիւնը, որ ոչ երբեք ստոյգը անստոյգ բանի համար կը թողու. բայց աւելի հաւանական կ'երեւնայ, որ նոյն իսկ Սաքաօլէն զգաց թէ Բօպերդ Եօրտ ու Եօրտի երկնային հուրը զինքը չէր ոգեւորէր, իրեն համար պաշտօնարանի մը սենեկին լուռ ու հանդարտ աշխատութիւնները աւելի ախորժելի ու բնաւորութեանը աւելի յարմար էին, քան թէ քաղաքական ասպարիզին բուն պատերազմները։ Սակայն իր բարեկամները զարմանքով ու ցաւով

տեսան իրեն խորհրդարանէն ելելը ու մեղադրեցին զՄաքաօլէն, որ ազնուական փառասիրութեան մը գերագոյն մրցանակն ընդունելու մօտ, ինքը կրկէսը կը թողուր ու դուրս կ'ելար :

Մաքաօլէն ոչ միայն Հնդկաստանի գերագոյն ժողովոյն անդամն էր, հապա՛նաւ անոր օրէնսդիր ժողովոյն խորհրդական : Իրեն յանձնեց ժողովքը օրինաց գիրք մը շինելու Հնդկային թերակղզւոյն մէջ Լնդղիոյ հպատակաց գործածութեանը համար : Շատ դժուարին գործ մըն էր ասիկայ, բայց սակայն նոր օրէնսդիրը յաջողութեամբ ղուխ հանեց իր աշխատանքը : Ղրժբաղդաբար, ինչպէս շատ անգամ կը պատահի աս տեսակ գործքերու, որ զարմանալի կերպով թղթի վրայ կարգաւորուած են, այդ օրինաց գիրքը որոնց համար որ շինուած էր, անոնց հաճոյ չանցաւ, և ոչ իսկ բնիկ տեղացւոյ կրցան գործածել. եղան նաև Հնդկաստան հաստատուող անգղիացիներ, որ սաստիկ գէմ գրին ասոր քանի մը հիմնական կարգաւորութեանցը :

Մաքաօլէ 1838¹ Լնդղիա դարձաւ աղէկ հմտացած Հնդկաստանի գործողութեանցը. անոր համար մէկը չեղաւ, որ իրմէ աղէկ և կամ իրեն հաւասար աս երկրին վերաբերեալ բան գրէ : Ուարէն-Հասդինկսի¹ ու Վլայլի² կենսագրութիւնները իր ընտրելագոյն գրուածքները կը սեպուին : Երոնց մէջ իր տեսութիւնները զարմանալի ճշդութիւն ու պայծառութիւն ունին, ոճը ընտիր, պատմելու կերպը երագ, ճշմարիտ անկողմնասիրութիւն, որ արդար կշռով կը բաժնէ թէ գովեստը և թէ

պարսաւը, միով բանիւ աս գործքերս գերազանց վարպետ գրչի արգասիք են. ըստ կարծեաց քննադատից անգղիական մատենագրութիւնը այսպիսի էջեր քիչ ունի : Բնիկ վերջը գրած երկու տեսութիւնքը Պապերու ու Վսաւերեան Ս. Փրանկիսկոսի առաքելութեանցը վրայ՝ վերիններուն չեն հասնիր : Լնդ համար շատ օգտակար գործ մը կ'ըլլար եթէ ինչպէս որ պէտք է, մէկը քննադատական տեսութիւն մը ընէր Մաքաօլէին ճաշակալը վրայ, որոնք միշտ իր ընտրելագոյն երկասիրութիւնքը պիտի համարուին :

Հնդկաստանէն երբոր Լնդղիա դարձաւ, քիչ մը ատեն նորէն քաղաքական գործոց մէջ մտաւ : Լատիմլըրկ քաղաքը 1839¹ զինքը նուիրակ ընտրեց և նոյն ատենը նաև պատերազմի պաշտօնեայ անուանուեցաւ : Լնդղիա քաղաքական կարգի մարդիկ ալ կրնան աս պաշտօնս վարել, բայց Ղրիմու պատերազմին փորձը ցրցուց, որ ասիկա շատ օգտակար բան մը չէ : Վիչ ատենէն Րոպերդ Րիլ Ուիկներուն¹ պաշտօնարանը կործանեց, ան ատեն Մաքաօլէն ալ ստիպուեցաւ իր բարեկամներուն հետ խորհրդարանին մէջ նոր պաշտօնէից հակառակ կողմը խառնուիլ : Հաղիւ թէ քանի մը անգամ խօսեցաւ աս անգամուս. բայց մէկ դիպուածի մէջ, որ պատմութեան դիմաց իր յաւիտենական փառքը պիտի ըլլայ, ձայնը բարձրացուց : Սէճ ելաւ Խուանտայի Մէնուտհ քաղաքին կղերանոցին վրայ. հնուց ՚ի վեր ընդունելի եղած դաշնագրութեանց զօրութեամբը Լնդղիոյ կառավարութիւնը պարտկան էր տէրութեան ծախքովը աս կղերանոցը պահելու : Մաքաօլէ համարձակեցաւ քաջութեամբ պատերազմելու նորազանդից կրօնամոլութեան կատաղի նախապաշարմանցը դէմ : Մաքաօլէ իր պեր-

1 Ծն. 1733. Մ. 1818. հռչակաւոր փոխարքայ անգղիական Հնդկաստանի, որ իր բրած բռնութեանցը ու անգթութեանցը համար Լնդղիական շուէցաւ ու խորհրդարանին դիմացը ամբաստանուեցաւ Փօքս, Պըրք, Շէրիտան Լնդղիոյ մեծ պէրճախօսներէն. դատաստանը երկնցաւ և վերջապէս խաղըսեցաւ ատենակալաց աչք գոցելովը :

2 Ծն. 1725. Մ. 1773. Լնդղիացի մեծ զօրավար, որ Լնդղիոյ տիրապետութիւնը հաստատեց Հնդկաստանի մէջ յետ մեծամեծ յաղթութեանց. աս ալ ամբաստանուելով թէպէտ և արգարացաւ, բայց սրտին ցաւէն ինքզինքը սպաննեց :

1 Լնդղիացւոյ ազատասէր կուսակցութեան անունն է. ասոնց ներհակ կուսակցութեան մարդիկներն ալ Դօբի կ'ըսուին, որոնք ուրիշ տեղ Եւրոպայի մէջ պահպանողական ըստեմներուն կը համապատասխանեն :

Ճախսօսութեամբը արդարութեան դատը վաստակեցաւ, բայց զինքը ընտրողներուն դիմացը իր յարգը կորսնցուց, որոնք 1847ին զինքը նորէն նուիրակ չընտրեցին: Հինգ տարի վերջը Ատիմ պըրկ քաղաքը շատ ազնուականութեամբ իր առջի ըրած սխալը սրբագրեց, միաբան հաւանութեամբ մեր գերազանց քաղաքագէտը նորէն նուիրակ ընտրեց, և ընտրութեանը համար եղած սովորական ծախքերն ալ քաղաքը ինքը վըճարեց: Սակայն ալ Սաքաօլէին անկարելի էր Այոհըզարանին վիճաբանութեանցը մասնակից ըլլալ իր նեղացուցիչ հիւանդութեանը պատճառաւ: անոր համար Լնգզիոյ թագուհին ուղեց զինքը արժանապէս վարձատրել ու ասկէց երկու տարի առաջ Լնգզիոյ տեղակալ անուանեց:

Շատ ատենէ ի վեր Այոհ Սաքաօլէ միտքը դրած էր Լնգզիոյ պատմութիւն մը գրելու 1688ին Յեղափոխութենէն սկսելով: Ինչպէս որ վերը ըսինք 1847ին նուիրակ չընտրուելով, հանգիստ ատեն ունեցաւ աս գործքիս պարսպելու: առջի երկու հատորը 1848ին հրատարակեց ու 1855ին ուրիշ երկու հատոր ալ: հինգերորդն ալ ծանուցուած էր, երբ մահը եկաւ յանկարծ անուանի պատմագրին զրիչը փըշրեց: Լնգզիոյ մէջ դեռ ամէն մարդ կը յիշէ աս գրքին փրկաւէտ ազդեցութիւնը՝ երբ առջի անգամ 1848ին Վաղզիոյ Յեղափոխութեան միջոց դուրս ելաւ: ան ատեն Լնգզիոյ մէջ ալ ոգիները կ'եփէին, բայց տեսնալով աս գրքիս մէջ, որ անգղիական աղատութիւնը ինչպիսի հաստատուն խարսխի վրայ հիմնած է, ոգիներու մեծ հանդարտութիւն եղաւ: Սակայն ըստ մատենագրական տեսութեան նոյն ատեն շատ պարսաւ ու շատ ալ գովեստ տուողներ եղան աս գործքիս: Լռանց երկայն բարակ բիւրաւոր դատաստաններու անել լաբիւրինթոսին մէջ մտնելու, անաչառ քննադատից կարծիքը հոս կը բերենք, որոնք կ'ուզէին աս պատմութեանս մէջ ուղղափառաց համար աւել-

լի անկողմնասիրութիւն տեսնել, ինչպէս որ Այոհ Սաքաօլէն ինքը ազնուական կերպով նոյն անկողմնասիրութիւնը ցըցուցած էր Այոհըզարանին մէջ, նուազ ատելութիւն իր քաղաքական հակառակորդացը դէմ, քիչ նախանձայուղութիւն իր կողմին համար, պակաս երևակայական նկարագիրներ պատմական տնձանց ու աւելի ճշմարիտ պատմական ոճ: Լսու ամենայնիւ աս գործքը միշտ պիտի մնայ իբրեւ զարմանալի ծնունդ զարմանալի հանճարի մը, որուն բեղմնաւորութիւնը գիտութեանը կը հաւասարէր, որուն ոճը՝ պայծառ ու որոշ մտածութիւն մը լուսոյ ճառագայթի պէս հրաշալի կերպով կ'անդրադարձնէր: Արեւի է որ մէկը Այոհ Սաքաօլէին կարծիքէն չըլլայ, բայց անկարելի է որ իրեն մտածածը իրմէ աղէկ բացատրէ: Սեծ արուեստագիտի սկսած արձանն է, որուն դժբաղդաբար թոյլ չտրուեցաւ իր մտաց ծնունդը ամբողջապէս գործադրել: յետինք աս պատմութեան հատուածը պիտի պահեն, ինչպէս զգուշութեամբ կը պահենք նախնեաց քանդակներուն անգին բեկորները:

Լնգզիոյն ալ Այոհ Սաքաօլէին աշիւնը նոյն սիրով ու նոյն մեծարանօք պիտի պահէ իր մեծ մարդկանց Սրբաբանին մէջ Ուէսդմիսդրի Լքբայաւանը՝ Սդէֆէնսընի՝ քով Եւրոնին մահարձանէն ոչ շատ հեռու:

Առանց ուղեւոր ուղիղի քան սորվեցրնել:

Վան քաղքին դրան մօտերը, դէպ ի Սիւլհուզ տանող ճամբուն վրայ պղտի տուն մը կայ, որուն գետնայարկը կարծես թէ վարձուորի մը բնակարան է, իսկ վերնայարկը քաղաքացի ընտանեաց մը բնակութեան շնորհք ունի: Վետնայարկ ըսածնիս ուրիշ բան չէ եթէ

1 Լնգզիացի երեւելի ճարտարապետ ու մեքենագէտ: Ծն. 1781. Մ. 1848: